43. ՅԱՅԼԻ ԿԱՐՄՈՒՆՔ

Կէղնի, չէղնի թուճար մարդըմ կէղնի։ Էդ թուճարն է, կելնի կարգվի, կառնե ջատ խորոտիկ կնիկըմ։ Շատ թիթիզ մարդըմ կէղնի էդ թուճար։ Կելնի կէրթա կղզու մը մեջ կշինի ուր տուն, օր թե մարդու աչք չառնե ուր կնիկ։

Էդ ծովու վրեն կբերե յայլի կարմունջըմ կկապե, լուսուն օր կիգա կընցնի, ղկարմունջ կթալե վըր ծովուն, կարմունջ կբացվի ու ինք կանցնի ծովու էնդին, ղկարմունջ կծալե կդնե ճեպ ու կառնե հետ կէրթա։ Հ՝իրկուն կիգա, մեկ լե կհանե ղկարմունջ, թալե վըր ծովուն, կարմունջ կրացվի ու ինք կընցնի, կիգա ուր տուն ու ղկարմունջ կծալե դնե ծոց։

Օրըմ, թե էրկու էգ հըմալ կընցնի։

Օր մը լե խորոտիկ թուրվանտա տղե մը կիգա ծովու պռուկ կօլըրտի։ Իմալ կէղնի թուճրի կնիկ փանճարից, էդ տղեն լե ծովու պուկեն, հաշարաթ կէնեն հ՝իրարու, ղիրար կտեսնան։

Կնիկ կելնի կիգա ծովու պռուկ, ինչ կէնին, ճար չգտնան։ Ախչիկ մեկ լե կվերու կասե.—Ճար օր էղնի, մեկ լե հ՝իսնով է, տղեն բանըմ չկռնա էնե։

Կնիկ օլանին, կասին, հազր ֆենտ ու ֆուլ կա։ Իմալ կէղնի, գիրըմ կգրե, կհասու տղի ձեռք, թե. «Գնա, ֆլան տեխ ջատուքար պառավըմ կա, էնի մինակ կանա ճամբու հանե»։

Տղեն կառնե ղթուղթ կարդա, բարև մնա կէղնի կնկաց ու թողե կէրթա։ Կէրթա ախչկա սալխած պառավ կփնտռե, գտնա ու կասե.—Նանե, ընծիկ հըմլա բանըմ է պատահի, ի՞նչ իտամ քզիկ, օր զիս տանիս էն կնկա խեչ։

Պառավն կասե.— Տաս օսկի տուր ընծիկ հըմկա, ես կէրթամ, զիմ պատրաստութենն կտեսնամ, վազ էկո իմ խեչ, կառնեմ զքզիկ կէրթամ։

Տղեն տվեց զտաս օսկին, թողեց գնաց ուր գործուն։ Պառավ առավ զտաս օսկին ու քշեց ջուկեն։ Կէրթա շուկեն, նաճարըմ կգտնա, կիտա էրկու-իրեք օսկի, չաքմաճե մը կշինե հըմալ, օր մարդըմ տեղադրի մեջ։ Ջաքմաճեն օր կիտա շինել, կէրթա մեկէլ փարեն լե կիտա, ուրեն հալավըմ կառնե, աղեկըմ կքոքվորի, հըմալ օր մարդ տեսնա զինք, չճանչնա։ Կվերցու չաքմաճեն ու կդառնա կիգա ուր տուն։

Օլոր օր տղեն հ՝ելավ էկավ պառվու մոտ.—է, նանե, ի՞նչ էրիր, զիմ գործ տեսա՞ր։

Պառավն ասեց.— Հա, լաո, տեսա, դը զքզիկ տեսնամ, վաղե ջուկեն, համալըմ առ, էկո ընծիկ։

Տղեն վազեց, առավ համալըմ ու էկավ։

Համալն օր էկավ, պառավ զկուժ տվեց համլի ձեռք, ասեց.—Գնա, կուժըմ ջուր բի։

Համալ օր գնաց ջրի, պառավ բացեց զսնդուկ, տղեն դրեց չաքմաճի մեջ ու զդուռ փակեց։

Համալ դառցավ էկավ։ Օր դառցավ էկավ, պառավն ասեց.— Վերու զէդա սնդուկ, տար տիր ֆլան յայլի կարմնջի հ՝առեջ, քու հախ ինչ օր էրեց, կիտամ։

Համալ ասեց.— Թըղ էղնի։

Պառավ հ՝ելավ, աղեկըմ զինաթվավ, զչաքմաճեն տվեց համլի շալակ ու էձգեց հ՝առեջ, դեմ յայլի կարմունջ, հ՝ու՞ր իս, էկա քի։

Պառավ գնաց կարմնջի գլուխ, կարմունջ զաթի չկեր վըր ջրին, կարմունջ թուճրի մոտն էր, մենակ տեխ գինեն, զչաքմաճեն հ՝իջուց, դրեց գետին, զհամլի հուխ տվեց, համալ թորկեց գնաց, ու ինք նստավ իշկեց, հար հ՝իրկուն կարմնջի տեր փրթավ էկավ։

Մարդն էկավ, սազեց զուր կարմունջ թալել վըր ծովուն, տեսավ օր պառավըմ էդ տեխ նստուկ է։ Հարցուց, ասեց.—Պառավ, դու հ՝ոդի ի՞նչ կէնիս։

Պառավ ասեց.— Ես ֆլան էրկրեն եմ, հ՝ելա էկա էդա քաղքի մեջ, ասի՝ տանիմ զիմ սնդուկ, ամբլյաթլի մեկըմ գտնամ, զիմ սնդուկ թասլիմ էնիմ ուրեն ու թորկիմ էրթամ մուխսութենի։ Էկա հարցուցի, փնտռի, քինե հ՝ելել ամբլյաթլի մարդ չգտա, ասի՝ տանեմ, էդ մարդուն թասլիմ էնիմ ու թորկիմ էրթամ։

Թուճարն ասեց.— Պառավ, քու սնդուկ ի՞նչ է, օր հ՝իսնե հ՝էվելի մարդ չգտար թասլիմ էներ հ՝ինկ։

Պառավն ասեց.— Իմ սնդուկ ամարաթ է ու մեռուկ մալ, օսկի, արծաթ, աղրութ ու զմրուտ։ Թասլիմ կէնիմ, վերև աստված, ներքև ես ու

դու, մինակ քզի. տար պահե, ես լե կէրթամ Երուսաղեմ մուխսութենի. թե օր դառցա, ղաթի կիգամ իմ սնդուկ կառնեմ, կէրթամ, թե օր չդառցա, էն օր ուրիշ ուտե, դու կի։

Մարդն ասեց.— Պառավ, ես երդում իմ էրի՝ մարդ իմ կարմնջի վրայով չընցնի, էդոր հ՝ապով չըմ տանի։

Պառավն ասեց.— Զէդ օր կասիս, չէղավ, ես չըմ հ՝իգա, վերցու զիմ սնդուկ մինակ, առ ու գնա, ես կթողիմ հոկցած կէրթամ։

Մարդ վերուց սնդուկ, առավ էկավ։ Պառավ լե բարի մնաց էղավ, թորկեց գնաց ուր տուն, կեոյա կէրթեր Երուսաղեմ։

Մարդ օր էկավ, սնդուկ դրեց, կնիկ փանճարից տեսավ, հ՝իշավ էկավ ցած։ Ասեց.—Մարդ, էդ ի՞նչ խալաբալըղ էր բերիր իմ դուռ, ես զիս չկրռնամ շարաշըվիմ, մնաց խալխի խոռվտեկ պահեմ։

Թուճարն ասեց.— Կնիկ, ի՞նչ էնենք, պառավըմ էր, էկավ կէրթեր Երուսաղեմ մուսխութենի, թաղիմ էրեց ընծիկ, ասեց. «Ամանաթ է, տար պահե. դառցա էկա, ղաթի կիգամ, զիմ մալ կառնեմ, կէրթամ, չէկա՝ թըղ էղնի ձըզիկ»։ Զիմ էրես շատ առավ, ջանդարդի էղա, առա ու էկա։

Կնիկն ասեց.— Օր հըմալ է, արի մեկ կանթ ես, մեկ լե դու վերու, դնենք թաբանճի տակ։

Մարդ ու կնիկ թալին զուրանց ձեռք, վերցին, դրին թաբանճի տակ ու թորկեցին, հ՝ելան վի։ Հ՝ելան վերին դին, կերան զուրանց հաց, պառկան քնան։ Լուսուն հ՝ելավ թուճար խմեց զուր չայ, զկարմունջ թալեց վըր ծովուն ու հ՝ընցավ գնաց ուր գործուն։

Մարդն օր գնաց ուր գործուն, կնիկն հ՝իջավ, բացեց զսնդուկ, ու առավ զտղեն, հ՝ելավ վերին դին, տղեն ու կնիկ, առ շաֆթալի, վըր շաֆթալի, շաֆթալին ըն բինի օլդի պիր փարա*. հար հ՝իրկուն գրկեցին զիրար ու պառկան։

Հ՝իրկուն օր մարդ էկավ ծովու պռուկ, զուր կարմունջ հանեց ծոցուց, թալեց վըր ծովուն, կնիկն առավ զտղեն, հաց ու ջուր, հ՝իջուց դրեց սընդուկի մեջ, փակեց զդուռն ու թորկեց հ՝ելավ վի, նստավ։

Մարդն հ՝ընցավ, էկավ ելավ վերին դին, հաց կերավ, քիչըմ խոշ ու բեշ էրեց կնկա հետ ու պառկավ քնավ չուրի առավոտ։

Հ՝առտուն մեկ լե հել օրվա պես հ՝ելավ, սաղեց զուր կարմունջ ու հ՝ընցավ գնաց։ Թուճարն օր գնաց, կնիկ հ՝իջավ վերին դիեն, զտղեն հանեց սնդուկեն ու առավ հ՝ելավ վերին դին։ Հ՝իրկուն մարդ էկավ կարմընջի տեխ, հանեց ծոցեն զկարմունջ, օր հ՝ընցնի հ՝իգա, տղեն դեռ հ՝օդի մեջն էր կէրթեր կիգեր. կթքու, թուք քեսի հ՝օդի թավան։ Մարդն

* Դեղձի մեկն եղավ մեկ փարա (դարձվածք է) (Թ. Կ.)։

էր, օր կընցներ կիգեր, կնիկ բերեց զտղեն, մտուց սնդուկ, փակեց ղսնդկի դուռ ու թորկեց, հ'ելավ վերին դին։

Մարդն էկավ մտավ ներս, ֆքրավ հ'առիք, տեսավ օր բըղլամ կա թավան կպուկ, դրեց զթարանճեն, հ'ելավ վի, տեսավ օր օղորդ թուք։ Ասեց.—Կնիկ, էդա ի՞նչ թուք է։

Կնիկն ասեց.— Վալլահ, մարդ, դու գինաս, օր նը ճիժ ունիմ, նը մարդըմ կա, օր ժըղլիմ հետ, հ'ընցում զօր, պառկա վըր միշացս, թքուցի, ասի՝ տեսնամ իմ թուք կքեսնի՞ թավան։ Թքուցի, կպավ հ'առիք։

Մարդն ասեց.—Կնիկ, քու թուք իմա՞լ հասավ հ'ոնի, օր մատամ դու իս թքուցի, էնգահ պառկուկ իս էղի, թքուցիր իս, հըմկա լե կանուկ տեխ թքու, տեսնամ, քու թուք իմա՞լ կհասնի հ'առիք։

Կնիկ քանի մը հեղ թքուց, չկառցավ օր հասուցներ հ'առիք։ Մարդու սիրտ հ'ընկավ թըշուվըշ։ Ասեց. «Իմ տան մեջ ուրիշ մարդ չկա, օր զէդ թուք թքու, կա ու չկա էդ հիլեն շաքմաճի մեջն է»։

Հ'իրկուն էղավ, հաց դրին կուտեն, մարդն ասեց կնկան.—Բի աթոռքըմ հ'ոդա դիր, մեկ՝ հոնա։

Կնիկ բերեց էրկու հատ դրեց։

Ասեց.— Հատ մը լե բի։

Կնիկ չգիներ ինչ դավի էր, բերեց, դրեց, փեճկիբըմ հ'էվելի դրեց, շաթալ-գդալըմ հ'էվելի դրեց։

Օր դրեց խըլըսավ, ասեց.— Դը հ'իշի, զքու հ'ընկեր լե առ ու էկո, հաց ուտենք։

Կնիկն ասեց.— Մարդ, դու ի՞նչ կասիս, զքու խելքն իս չըլդըրմիշ էրի, ընծիկ հ'ընկեր հ'ու՞տե։

Մարդն ասեց.—Քզիկ կասեմ՝ հ'իշի զքու հ'ընկեր լե առ, էկո, հաց ուտենք, դու կասես՝ ինչ հ'ընկեր է, հա։ Քու հ'ընկեր հանդե շաքմաճի մեջ, հ'իշի առ ու էկո ուտենք հաց, մեկ լե թըղ էրթա մտնի ուր տեխ։

Զոռեց կնկա վրեն, կնկա ճար կտրավ, հ'իջավ գնաց, առավ զտղեն ու էկավ։ Կերան հաց, խըլըսան, մարդ ինքն ուրեն տուշունմիշ էղավ, ասեց. «Զէդա կնիկ սպանեմ, ուրիշներ պիտի ասեն՝ տես, գնաց ծովու հ'օրթոլախ շինեց տուն, օր մեկըմ աչք չթալեր ուր կնիկ, էդա խըտար մասրաֆ էրեց, հըմկա լե գացին գտան, մարդ տեսավ մոտ, սպանեց. էդոր ազեկն է, թողեմ զէդա տուն ու տեխ էդ տղին ու կնկան, հ'ելնեմ առնեմ գիշերով գիմ գլուխ ու կորեմ»։

Հ'ելավ լուսումութ շուտ, լցեց հակուբե մը օսկի, թալեց զկարմունջ ծովու վրեն, հ'ընցավ էն գին, թողեց զկնիկ, տուն ու կարմունջ տղին ու առավ զգլուխ, կորավ։

Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, ծառու մը տակ հ'աղբուրըմ կեր, դրեց զուր հակուբեն, լոխմե մը հաց կերավ, խմեց զուր ջուր, տեսավ օր էն

դիեն բոզ ձիավոր մը, սիլավորուկ, մզրախ ձեռկ կդդմե ու կիգա։ Ասեց. «Կա ու չկա էգա ձիավոր ընծիկ կիգա, օր էկավ զիս տեսավ էդա տեխ, խերն հազ կսպանե։ Ի՞նչ էնիմ, ի՞նչ չէնիմ, ազեկն էն է, օր փախնեմ հ՝ելնիմ էդա ծառ, հար հ՝իգա ձիավոր հ՝ընցնիր»։

Առավ զուր հակուբեն ու հ՝ելավ ծառու գլուխ, նստավ։ Տեսավ, օր բոզ ձիավոր էկավ ու հ՝աղբրի վրեն հ՝իջավ, զարկեց զսրքտեն զձին կապեց, ճեպեն խնձորըմ հանեց, կիսեց զխնձոր, մեջեն հուրնիկ-հրեղեն կնիկըմ հ՝ելավ։

Օր կնիկն հ՝ելավ, մարդն ասեց.—Հ՝ելի զհակուբեն բի, բաց լոխմե մը հ։ց ուտինք։

Հ՝ելավ կնիկ, առավ զհակուբեն էկավ, բացեց, հանեցին հաց ու կերան՝ ինք ու ուր իրիկ։ Խմեցին ջուր, մարդն վերուց ասեց.—Կնիկ, էդա տեխ հով է, զշոքդ դիր, քիչըմ զգլուխս դնեմ վրեն, քնեմ, հ՝ելնինք էրթանք. օր մարդ էկավ, հ՝իմցու զիս։

Կնիկ գրեց զշոք, մարդ դրեց զգլուխ ու քնավ։ Օր քնավ, կնիկ բերեց հանեց ճեպեն զքնու հ՝լուն, թալեց իրկա անկաճ, գլորեց քարըմ բերավ իրկա խեչ, վերուց ուր շոքի վրայեն զիրկա գլուխ, դրեց վըր քարին։

Օր դրեց զիրկա գլուխ վըր քարին, դառցավ ճեպեն խնձորըմ հանեց, տապկեց, մեջեն հ՝ելավ բաբա իկիթ տղե մը. առ շաֆթալի, վեր շաֆթալի, շաֆթալինըն բինի բիր փարա. սայըլմիշ էղան հ՝իբար ու պառկանե։

Ծառու վրայու մարդ կտեսներ. ինքն ուրեն ասեց՝ էդի իմ ախպերն է։

Էփեի մանցին կնիկ ու տղեն հ՝իրարու խեչ, եբ քեֆ ուրանց հասլավ, վերուց զտղեն դրեց խնձորի մեջ, զէրկու տապակ զարկեց հ՝իբար, հանեց զհլուն, թալեց իրկա անկճեն ճեպ ու ձեռքով լակեց, ասեց.—Հ՝ելի, հերկե քնես, հ՝ելի էրթանք։

Մարդն հ՝ելավ, բերեց զկնիկ դրեց ուր խնձորի մեջ ու վերցուց, դրեց ուր ճեպ։ Հ՝ելավ հեծավ զուր ձին ու հ՝ընկավ ճամբախ։

Էդ ծառու մարդն ասեց. «Ես էլ հ՝ու՞ր կէրթամ, իմ փնտռած լե էդ էր, կանի հ՝իջնեմ էրթամ էդոր հ՝առեջ, առնիմ, էրթամ իմ տուն»։

Ձիավոր օր հեծավ զուր ձին, քիչըմ տեխ գնաց, մարդ հ՝իջավ օլոր դիով մը վազեց, գնաց ձիավորի հ՝առեջ, օր շայիշ* չէնե ինք ծառն է էղի, գինա թե ինք հ՝առջևեն կիգա ու ասեց.—Ախպեր, ախպեր, կանի, քզիկ բան կասեմ։

Ձիավոր կանավ։ Մարդ գնաց, հասավ, ասեց.—Ես էսօր քաղքեն հ՝ելեր իմ, էկի քու հ՝առեջ, օր զքզիկ տանեմ իմ տուն մսաֆըր էնեմ։

---

* Կարծիք (Ծ. Բ.)։

Ձիավոր մտածեց, ասեց. «Ձաթի ես էկեր իմ էդա տեխ, խարիպ իմ, հ՝ու՞ր էրթամ, օր էդա մարդու տնեն աղեկ էղնի, քանի օր ինք լե էկեր է իմ հ՝առջե, կպատվե, տանե ուր տուն, ես լե կէրթամ»։ Հ՝ընկավ մարդու հետ, քշեց էկավ ծովու պռուկ, տեսան օր կարմունջ վըր ծովուն է դրռ, հ՝ընցան էկան տուն։ Հ՝ելավ վի, տեսավ օր կնիկ ու տղեն տուն ին։ Ասեց.—Կնիկ, հ՝էսօր խոնախ եմ բերի քզիկ, հ՝իշի հացի թատարուկ տես, օր մըր խոնախ անոթի չմնա։

Կնիկ հ՝իշավ, հացի թատարուկ կէներ, մարդն ու ուր մսաֆըր բաղլամիշ էրին, դարդլամիշ էղան հ՝իրարու, տղեն լե հոն էր։

Էնդոնք ժըղլելու մեջն են, կնիկ էկավ մտավ ներս, ասեց.—Մարդ, հաց էղավ, բերի՞մ։

Մարդն ասեց.— Օր էղավ, բի աթոռք, սեղան պատրաստե, նստինք ուտենք։

Կնիկ բերեց աթոռք, սեղան հազրեց, չորս աթոռք, չորս դանակ ու գդալ բերեց։ Մարդն ասեց.— Կնիկ, էրկու աթոռք ու էրկու դանակ-գդալ լե բի։

Կնիկ գնաց էրկու աթոռք, էրկու դանակ-գդալ լե առավ, էկավ։

Նստող մարդ զարմացավ, ասեց. «Ձանըմ, մենք էդա տան մեջ չորս հոգի ենք՝ իրեք մարդ, մեկ կնիկ, էդա էրկու աթոռք, էրկու դանակ հ՝որի՞ հ՝էվելի բերեց, դրեց»։ Հարցուց, ասեց.—Ախպեր, հարցնել ամոթ չէղնի, մենք չորս հոգի ենք, էդա էրկու աթոռք ու էրկու դանակ-գդալ վի՞ր դրիկ։

Մարդն ասեց.—Էնի քու գործ չի, տան տիրու գործին չըն խառնվի, էնի իմ գործն է։

Կնիկ գնաց, հաց բերեց, դրեց սեղան, օր նստան հաց կուտեն, թուճարն զձիավոր քլմստեց, ասեց.

— Հանե զքու հ՝ընկեր ճեպեն, դիր թըղ էրթա հաց ուտե, մեկ լե դիր քու ճեպ։

Թուճարն հանեց զխնձոր, տապկեց, կնիկ հ՝ելավ նստավ, հաց կերավ։

Օր ձիավոր հանեց զկնիկ, գրեց կուշտ, ըստ հազ թուճարն մոտեցավ, զէնի գրգմեց, ասեց.— Հանե զքու հ՝ընկեր, դիր հաց թըղ ուտե, մեկ լե էրե խնձոր դիր ճեպդ։

Կնիկ ճիպ ընքյար էրեց։

Մարդն ասաց.— Ձքզիկ բըլտանք մը թալի, ազամաթի հանե, դիր հ՝ոնա։

Կնիկ հանեց զխնձոր, տապկեց, տղեն հ՝ելավ, նստավ կուշտ։

Հաց կերան, խըլըսան, վերցուց թուճար ասեց էդ կնկդոց.—Հ՝ելեք, գացեք էնդի հ՝օդեն ձզիկ ժըղլեք, մենք լե հ՝ոդա կժղլենք։

Էնդոնք հ՝ելան գացին ուրիշ հ՝օդե մը, էրկու մարդ զուրանց դարդեր բաշլամիշ էրին, բացին հ՝իրարու։ Տան տերն ասեց.—Կտեսնա՞ս զէդա իմ տուն ու տեխ, հ՝ելա քաղքեն փախա, էկա էդա տեխ, ասի՝ բալքիմ մարդ զիմ կնիկ չտեսնա, ախբր էդա տղեն էկավ գտավ։

Ձիավոր ասեց.— Քու գարդ լե իմ դարդեն է, ես լե քու պես զանկին ենք, ինչ էրի իմ կնկա հետ՝ շարա չէղավ, էրի խնձոր, դրի ճեպս ու հեծա զիմ ձին, ընկա սարեր, ախբր ձեռքեն չազատա։ Էդոր շարեն էն է, օր հ՝ելնենք լուսուն, էրկու տղեն ու էրկու կնիկ թողենք հ՝ոդա, ուրանց քեֆին թըղ էրթան, ինչ կուզեն, թըղ էնեն, մեկ ձի կա, ձի մը լե կառնենք, կլնանք մեկ մեկ հակուբա օսկի, թալենք վըր մըր թարկեն ու թարկի դյունյա էղնենք, էրթանք։

Հ՝ելան գացին շուկեն, ձիավորն ու էդ թուճար, առան ձի մը, էկան կանչեցին ղէրկու կնիկն, ասին.— Էդա տուն ձըզիկ, մեկ զուր ճեպեն, մեկ լե ղսնդկի միջուն թըղ հանե, էնե ուրեն հ՝ընկեր ու մենք կէրթանք։

Թասլիմ էրին զտուն էդ չորսին ու հ՝ելան հեծան զուրանց ձիանք, առան զէրես ուրանց ու կորան։

Էդ մարդիկն է հ՝ելան լուսուն, հեծան զուրանց ձիանք ու թարկի դյունյա էղան, հ՝ընկան սար ու ձոր։ Օլըրտան քաղքե քաղաք, գացին Վերան շրհար անունով քաղաքի մը տախիլ էղան։

Գացին օլըրտան էդ քաղաքի մեջ, ծանդըր թուճրի մը տուքնին հ՝ռաստ էկան։ Ասին. «Անդարդ մարդ աշխըրկիս մեջ օր կա, էդա մարդն է, մենք կէրթանք հ՝էսօր էդ մարդուն էղնինք մսաֆըր»։ Նստան էդ մարդու մըղազի դուռն ու իշքին հարի հ՝ելնի հ՝իրկուն, էրթա ուր տուն, հ՝ընկնին հետ, էրթան։

Էդ թուճարն է, իշքեց տեսավ օր էդ մարդիկ ուրեն կսպասեն, ասեց. «Ջանըմ, էդա մարդիկ էղավ իրեք սրհաթ էդա տեխ կանուկ ին, կէղնի՞ գործըմ ունին իմ հետ»։ Կանչեց հարցուց ու ասեց.—Ախպրտանք, դու ի՞նչ տեղացի եք, հ՝որի՞ն եք կանի հ՝ոդի։

Ասին.— Մենք խարիպ մարդ ինք, մարդ չընք ճանչնա էդա քաղքի մեջ, կաներ ինք մզիկ տեխըմ իտաս։

Թուճարն ասեց.—Կանեք էդա տեխ, հ՝իրկուն էրթանք մըր տուն։ Հար հ՝իրկուն էդ էրկու հ՝ընկեր մացին մոմզըվուկ թուճրի դուքնի դուռ, մինչև օր հ՝իրկուն փակեց զղուքնի դուռ, հ՝ընկան թուճրի հ՝ետև, գացին թուճրի տուն։

Գացին թուճրի տուն, նստան քիչըմ ըռհաթան, կերան ուրանց հաց ու քաշվան ուրանց տեխ նստան։ Հարցուց թուճար, ասեց.—Ախպըրտանք, դու զէն մը ասեք՝ ախբր ձըր գլխու գալածն ի՞նչ է, իմա՞լ իք էկի հ՝ընկի էդա տեղրանք։

Էրկուս լե ուրանց գլխու գալած, իմալ օր մենք թարիֆ էրինք, հըմալ թարիֆ էրին էգ թուճար մարդուն։

Էդ մարդիկ օր զուրանց գլխու գալած պատմեցին, ասավ.—Ախպըրտանք, հըմեն դուք զձըր գլխու գալած պատմեցիք, ես լե զիմ գլխու գալած կպատմեմ, անկաճ էրեք, տեսնանք ձըր դարդն է ծանդր, թը չէ՝ իմ։

Վերուց թուճարն ասեց.— Ես ու իմ կնիկ, հ'իրարուց հազ չատ կէնենք, հըմալ օր ես կասենք՝ արև մը հ'ելնի, հար իմ կնիկ հ'ելնի քնուց. էն լե՝ կասեր՝ արև մը հ'ելնի քնուց, հար իմ իրիկ հ'ելնի քնուց։ Ես միտքըս փոխեցի, հ'ելնենք էրթանք թուճրուութենի, խավլ ու խրար էրի իմ կնկա հետ։ Ասի. «Ես օր էրթամ թուճրուութենի, էղավ օր բան է, ընկա մեռա, դու կկարգվի՞ս, չըս կարգվի՞»։ Կնիկն ասեց. «Դու մեռար, վահտ էղնի՝ ես չկարգվիմ. ես մեռա, վահտ էղնի՝ դու չկարգվիս»։ Ուխտ ու պայման էրինք օր, մեկ մեկու հ'ետևեն չկարգվենք։ Ուխտ ու պայման օր էրինք, ես հ'ելա գացի։ Գացի, գործս չհաջողվավ, էրկու-իրեք ամիս մանցի։ Մարդու մը մեկ կելնի գիր գրե ընծիկ թե՝ քու կնիկ մեռեր է, շուտ էկո հասի քու տուն։ Թուղթն օր առի կարդացի, խելքս գլխես թռավ։ Ասի. «Ջանըմ, ես էկա, իմ կնիկ սալամաթ էր, էդ ինչ էղավ, ես ջահել եմ ու ուխտ էրեր իմ օր, հ'ետև իմ կնկա հ'ընցման չկարգվեմ, իմա՛լ էնեմ, հ'ելնեմ զիմ վարոց կտրիմ, ի՞նչ էնեմ»։ Էնդին, վէնդին հարցուցի, ասին. «Էդոր չարեն էն է, օր էրթաս հեքիմից դեղ առնիս, ուտիս, կտրիս մարդկութենե, էլ քզիկ դարդ չէղնի»։ Ասի՝ էդի աղեկ է։ Հ'ելա գացի հեքիմի մոտ, առա դեղ, կերա, մարդկութենե կտրա։ Հ'ելա փոռ ու փոշման, իմ գործ լե չհաջողվավ, զարկի էկա իմ տուն։ Ասի՝ էրթամ, տեսնամ իմ տան հալն իմա՞լ էղավ։ Էկա, օր քաղքին մոտեցա, զիմ գալ լսած են, հ'ելան էկան իմ հ'առեջ։ Էկան իմ հ'առեջ, հարցուցի՝ աճայիպ ի՞նչ կա, չկա, մեր տնեն ի՞նչ սալրդ-սուլուղ կա։ Ասին՝ ինչ կա, բան չկա, հ'ըմեն լե սաղ սալամաթ են։ Ասի՝ կյալը, իմ կնիկն իմա՞լ է, էն լե սալամա՞թ է։ Ասին՝ փառք աստծո, սալամաթ է, ի՞նչ է էղի։ Մեկ դարդն էղավ հազար, տփի վըր գլխուս՝ հեյ վախ, ասի, էս ի՞նչ էր էրի։ Քշեցի զիմ ձին դուռ, հ'իջա։ Մանցինք չուր ի հ'իրկուն։ Հ'իրկուն օր էղավ. տեխ մի թալին, գացինք պառկանք օր քընենք։ Տեխի մեջ մտա, զարկեցինք մեջք միջաց, պառկանք, քնանք։ Էն օր ձեն չհանեց։ Պառկանք քնանք, հ'ելանք լուսուն, ասեց իմ կնիկ՝ զայիր դադրուկ էր, էսօր ընծիկ չմոտեցավ։ Օլոր օր հ'իրկուն մթնեց, զտեխ մի թալին, մեկ լե մտանք տեխի մեջ, պառկանք։ Օր մտանք տեխի մեջ պառկանք, մեկ լե զարկինք մեջք միջաց, իմ կնիկ էկավ սրտիս վրավեն մաժեց, հ'իջավ վըր պորտանս, տեսավ օր հարաքյաթ չկա հ'իս, ես ուր դին չըմ դառնա։ Ասեց. «Մարդ, հալա էրեկ դադրուկ էր, չղառցար իմ դին, հ'էսօր ի՞նչ է էղի.

օլրեր իս զհ՝. .դ իմ դին ու պառկի, ես քու հ՝. . .ուդ մայի՞ն իմ, հեղում լ՝ դառցի էդա դին»։ Վերցի ասի. «Կնիկ, չէ՞ ես ու դու ուխտ էրինք հ՝իրարու հետ մեկ-մեկու հ՝ընցման հ՝ետե էլ չկարգվինք, հաշվե, թե ես մեռեր իմ, քղիկ գիրկ ու ծոց պետք չէ, հ՝որի՞ դառնամ էն դին»։ Կնիկ վերուց ասեց.«Մենք դրա չընք մեռեր ի, հ՝որի՞ն ենք մեռի, օր մեռնենք սորա զէդ խոսքն ասե, հըմկա զէդ խոսքն մ՝ասիս»։ Ջանգարդի էղա, էլ նար չգտա. «Կնիկ, չէ ընծիկ գիր գրեր ին էդա տեխեն, թե՝ քու կնիկ մեռեր է, ես լե ասի՝ քանի օր ուխտ իմ էրի իմ կնկա հետ մեռնելուց հ՝ետև էլ չկարգվիմ, հ՝ելա առա դեղ, կերա, կտրա մարդկութենից, հ՝իսնե ի՞նչ կուղիս»։ Կնիկն կասե. «Հո, հո, էդ ի՞նչ է, ես ջրհել իմ, ուտուկ-խըմուկ, ընծիկ բան պետք է, ինչ խավլ ու խըրատ է, կօլրի՞ս էղա դին օլրի, չըս օլրի՝ ես լուսուն կթողեմ, կէրթամ»։ Տեսա օր խայտառակ պիտի էղնեմ աշխըրկի մեջ, փիրոյի պըլիկ էղնի իմ պատիվ, ասի. «Կնիկ, դու ու քու աստված, քզիկ մարդըմ գտի, անուն իմ թըղ էղնի, նստի հետ ու կանի»։ Դու մ՝ասի մեր տուն գընուկ արապըմ կեր, հ՝ըմնօր էդոր հետ կնստեր, կաներ իմ կնիկ, օր դառդուլի էղավ, գնաց իմ աչքի հ՝առեջ նստավ էդ արպու հետ ու հ՝ելավ։ Լսեցի՞ք հըմկա զիմ գլխու գալած։

Էդոնք ասին.— Հա։

Օր ասին հա, կանչեց զկնիկ, էկավ ներս։ Մարդիկ օր տեսան զէդ կնիկ, խելք ուրանց գլխեն գնաց, մարալ մըն էր, մարդ էրկու հեղ չկարեր ուր հ՝երես իշքեր։ Օր էկավ կնիկ, տեսան, իրիկն ասեց.—Դը գնա քու տեխ, հար էկար՝ էղավ. կկանչենք օր ջուրըմ բերեր մսաֆըրներուն, ես բերի։

Կնիկ օր գնաց, թուճարն ասեց.— Ախպըրտանք, զիմ կնիկ տեսա՞ք։

Մսաֆըրներ ասին.— Հա, տեսանք։

Թուճարն ասեց.— Հըմկա իմ դա՞րդն է շատ, թը չէ՝ ձեր։

Մսաֆըրներն ասին.— Վահլայի, քու դարդ ծանդր է վըր մըր դարդեն։

Օր ասին՝ քու դարդ ծանդր է վըր մըր դարդեն, թուճարն ասեց.— Դը, հ՝ելեք, դառցեք գացեք ձըր տուն, ապայե կուլո խայել էղեք։

Մարդիկ հ՝ելան, քերեցին զուրանց անկճի տակ ու դառցան էկան ուրանց տներ։ Առան զուրանց կնկտիք ու նստան։

Աստծուց հ՝իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։